



## Հարգելի ընկեր,

Որպես «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի հիմնադիր և տնօրենների խորհրդի նախագահ՝ ես երջանկությունն ունեմ վայելելու ԱՄՆ-ում ինձ ընձեռնված անձնական ազատությունները: Այնուամենայնիվ, նախորդ 10 օրն ապրել եմ սարսափի և արհավիրքի այն պատկերներով, որ տեսել եմ Արցախում և Հայաստանում ապրող մեր երեխաներն ու մեծահասակները: Նրանք ենթարկվել են թուրքիայի կողմից ղեկավարվող ադրբեջանական զինված ուժերի և ահաբեկչական խմբավորումների անողոք հարձակումներին, որտեղ անարգվում է մարդկային կյանքը:

Թախանձագին խնդրում եմ ձեզ դիտել **60 վայրկյան տևողությամբ** այս տեսանյութը, որ պատմում է Հայաստանում և Արցախում ծավալվող մարդկային ողբերգության մասին. ժամանակակից հակամարդկային զենքի կիրառումն այն արագորեն վերածում է ցեղասպանության: Թուրքիայի և Ադրբեջանի կառավարությունների ռազմական արշավի գերնպատակը Արցախի խաղաղ բնակչության տեղահանումն է ու բնաջնջումը, մարդկանց, ովքեր իրենց նախնյաց հողում ապրում են արդեն 2700 տարի: Սա Թուրքիայի կառավարության կողմից **հայերի երկրորդ ցեղասպանությունը** նախաձեռնելու հստակ փորձ է:

Թուրքիայի և Ադրբեջանի ղեկավարությունն արդեն 10 օր է՝ ռազմական հանցագործություն է իրականացնում՝ թիրախավորելով և շուրջօրյա ռեժիմով հրետակոծելով խաղաղ բնակչությանը, օդային հարձակումներով ռմբակոծելով հիվանդանոցները, դպրոցները, խիտ բնակեցված տարածքները: Բացի այդ, և՛ Թուրքիայի, և՛ Ադրբեջանի կառավարություններն ինտենսիվ կերպով արատավոր ապատեղեկատվություն են տարածում, անհեթեթ պատմություններ են հորինում հայերի կողմից սադրանքի և տարածքներ գրավելու մասին՝ այդպիսով շեղելով ուշադրությունը իրենց հիմնական առաքելությունից՝ էթնիկ զտումներից:

Ես գիշեր-ցերեկ կապի մեջ եմ Հայաստանում **ՔՈԱՖ-ի** թիմի հետ՝ տեղեկանալու ամենաթարմ լուրերին: Մարդիկ վտանգի մեջ են: ՔՈԱՖ-ի շահառու համայնքներից **երեք երիտասարդ**, ում գիտեմ, երբ դեռ մանուկ էին, այս օրերին հերոսաբար զոհվել են՝ պաշտպանելով մեր ժողովրդին ու մեր երկիրը:

Աշխարհի առաջնորդները, այդ թվում՝ ԱՄՆ նախագահը, մինչ այժմ ձախողել են մարդկային այս ողբերգության կասեցումը: Ու սա՝ չնայած այն հանգամանքին, որ Կոնգրեսն արդեն սկսել է բարձրաձայն դատապարտել այս հարձակումները: Վերջերս դատապարտող ելույթ ունեցավ կոնգրեսական Ադամ Շիֆը (**հղում 3.5-րդ պեանոց տեսանյութին**): Միջազգային հանրությունը ևս սկսել է ուշադրությունը սևեռել հարցին. օրեր առաջ իսրայելցի մտավորականները մատնանշեցին Ադրբեջանի վերջին ագրեսիան և **կոչ արեցին Իսրայելին դադարեցնել զենքի վաճառքն** այդ երկրին:

Խնդրում եմ ձեզ մի քանի րոպե տրամադրել, զանգահարել Սպիտակ տան 202-456-1111 հեռախոսահամարով (ժամը 9:00-16:00 EST) և պահանջել, որ արժանի դիրք բռնեն այս ոճրագործությունների դեմ՝ հանուն բազմաթիվ անմեղ կյանքերի փրկության:

Բացի այդ, կարող եք զանգել Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտե 202-224-4651 հեռախոսահամարով:

Խնդրենք Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահին և Սենատին՝

- առաջնորդի դեր ստանձնել՝ կանխելու հայերի երկրորդ ցեղասպանությունը:
- ԱՄՆ կառավարության մակարդակով անհապաղ հանդես գալ հայտարարությամբ՝ դատապարտելով Ադրբեջանի և Թուրքիայի կառավարություններին Արցախի անմեղ քաղաքացիների վրա դաժան հարձակումների և սանձազերծած ռազմական հանցագործությունների համար:

Եթե ԱՄՆ քաղաքացի չեք, թախանձագին խնդրում եմ կապ հաստատել ձեր երկրի քաղաքական գործիչների հետ՝ նույն ուղերձը նրանց փոխանցելու:

Շատ շնորհակալ եմ այս հարցին ձեր ուշադրության համար:

Մարդասիրության աներեր դիրքերից՝

Կարո

